ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

---

« 11 » հուլիս 2024թ. No 3799 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի կետ 1-ի, ԵՏՀ խորհրդի 2016 թվականի նոյեմբերի 3-ի թիվ 78-որոշման 19-րդ հավելվածի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/913-24 առ 08.07.2024թ. փորձագիտական եզրակացությունը

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու (ԵԱՏՄ գրանցման փոխադարձ ճանաչում) ընթացակարգով գրանցել երաշխավորված թվով 3 դեղը՝ համաձայն հավելված 1-ի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին:

2) «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության լուծարման հանձնաժողովի հանձնակատար Նաիրա Ռոմանովային՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Ուժը կորցրած ճանաչել նախկինում գրանցված «Լակտոդեպանտոլ մոմիկներ հեշտոցային 100մգ» դեղի N21505 գրանցման հավաստագիրը՝ համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 180-րդ կետի:

5.Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լիլիթ Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

6. Դեղի գրանցման ժամկետը սահմանվում է համաձայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի նոյեմբերի 3-ի թիվ 78 որոշման 77-րդ և 180-րդ կետի, հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի հուլիսի « 11 » - ի N 3799 - Ա հրամանի

Եվրասիական տնտեսական միության անդամ երկրում գրանցված դեղի գրանցումը փոխադարձ ճանաչելու ընթացակարգով գրանցված դեղերի ցանկ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Մետրոգիլ | մետրոնիդազոլ | դոնդող արտաքին կիրառման | 10մգ/գ; 30գ լամինապատ պլաստիկե պարկուճ | Յունիք Ֆարմասյուտիկալ Լաբորատորիես (Ջ. Բ. Քեմիկալս և Ֆարմասյուտիկալս ՍՊԸ-ի մասնաճյուղ), Պլոտ No 304-308, Գ.Ի.Դ.Ս. Ինդուստրիալ Արեա, Պանոլի: 394 116, Գուջարատ նահանգ | Հնդկաստան | Յունիք Ֆարմասյուտիկալ Լաբորատորիես (Ջ. Բ. Քեմիկալս և Ֆարմասյուտիկալս ՍՊԸ-ի մասնաճյուղ), Վորլի, Մումբայ 400 030 | Հնդկաստան | Դ | 22194 (002229) 04.07.2023 |
| 2 | Լակտոդեպանտոլ | կաթնաթթու | մոմիկներ հեշտոցային | 100մգ; (10/2x5/) | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | ԱԴ | 22195 (000188) 04.07.2024 |
| 3 | Ինդապամիդ ՄԲ ՍՏԱԴԱ | ինդապամիդ | դեղահատեր երկարատև ձերբազատմամբ թաղանթապատ | 1,5մգ; (30/3x10) բլիստերում | Հեմոֆարմ ՍՊԸ, 249032, Օբնինսկ, Կալուգա շրջան, Կիևսկոյե մայրուղի 62 | Ռուսաստան | Նիժֆարմ ԲԸ, 603105, ք. Նիժնի Նովգորոդ, Սալգանսկայա փ., 7 | Ռուսաստան | Դ | 22196 (006144) 04.07.2024 |